№ 6 ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆՎԱՐԻ 12
1903
ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆՎԱՐԻ 12 № 6

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Այսօր, ամսիս 12-ին, հանգուցեալ

ԱՒԵՏԻՔ ԲԱԼԱՅԵԱՆ ՂՈՒԿԱՍԵԱՆՑԻ

մահվան քառասներորդ օրը, կը կատարվի հոգեհանգիստ ս. պատարագից յետոյ հանգուցեալի գերեզմանի վրա Վանքի աւագ եկեղեցու բակում։
Հոգեհանգիստը կը սկսվի $12^1/_2$ ժամին։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Կիրակնօրեայ զրոյց. Մատենագրութիւն. Նամակ Բագուից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—Մանրանկար.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Պատռենք թանձր խաւարը, բաց անենք գոնէ մի փոքրիկ, նեղ ճեղք դէպի մի խեղճ ու կրակ երկիր։ Ամեն ինչ միացած է, որ լուռ ու անխօս լինի այդ երկիրը իր ամբողջ դժբախտութեան մէջ։ Բայց մի մի անգամ կարելի է լինում մի բան տեսնել այնտեղ։

Երկու թէ երեք տարի առաջ Մուշի հայ կանայք իրանց գանգատը կարողացան հանել իրանց Տարօնի սահմաններից, լսեցնել տալ հեռու տեղերում։ Ի՞նչ էր այդ գանգատը։

Թիւրքաց Հայաստանը պանդխտութեան հայրենիքն է։ Բայց ոչ մի տեղ այդ երկրում այնքան աւերված չէ պանդխտութիւնից, ինչպէս Մուշը։ Երևակայեցէք օտարութեան մէջ տարիներով թափառող մի բեռնակիր, որ մշեցի չը լինի։ Կան ուրիշ շատ տեղերից էլ, այո։ Բայց այնքան շատ են մշեցիները, պանդխտութիւնը այնպէս խոր դրոշմված է մշեցու ճակատին, որ Հայաստանի զանազան կողմերից դուրս եկած մշակներին սովորական է դարձել մշեցի անուանելը։

Մուշը չարունակ դատարկվում է, Մուշը տարածված է ամեն տեղ, ուր հարկաւոր է երկոտանի գրաստ՝ մարդուն ծառայելու համար։ Ուր որ պէտք կայ մէջքերից երեք անգամ ծալվել ահագին բեռան տակ, ուր հարկաւոր է ամբողջ օրը մի քանի կոպէկով մի ամբողջ չարքաշ, դիմացկուն մարդ բանեցնել, ուր որ կարող է մի կտոր չոր հացով ապրել, քնել երկնքի տակ կամ մի որ և է սոսկալի նկուղում, պահապան կանգնել դրան մօտ՝ «եաման մեր մայլաքաթ» երգելով, մի խօսքով ուր որ կարելի է քրտինք թափել, կոպէկներ առնել և նրանց մի մասը պահել,—այնտեղ է մշեցին։

Հնուց է այս ճակատագիրը։ Սերունդներ սերունդների ետևից սրբագործել են այս կարգը. դուրս գալ տանից, եօթը սար անցնել, եօթը տարի ապրել հեռու, հեռու, թողնելով այնտեղ, վաթանում, կնոջն ու երեխաներին։ Եւ կինը դիմանում էր։ Կինը պահում էր տունը։ Մշեցի կինը հերոսուհի էր, նահատակ էր։ Առանց այդ կնոջ թափառական մշեցի չէր կարող լինել։ Երկու անբաժան մասից էր կազմված մշեցի մշակը. մէկը թափառում էր օտարութեան մէջ, միւսը մնում էր երկրում։ Եւ երկուսը այդպէս էին անց կացնում իրանց երկրաւոր կեանքի մեծ մասը. միմեանց նեցուկ, միմեանց կարօտ, միմեանց կանչող հեռու տարածութիւններից, բայց միմեանցից անբաժան։

Այժմ խզվել է այդ կապը. այժմ երկու մասերի մէջ ճեղքուած է գոյացել, Մուշի կանայք այլ ևս դիմանալ չեն կարողանում. Նրանք պահանջում են, որ յարգվեն իրանց մարդկային իրաւունքները։

Եթէ յիշում էք, երկու թէ երեք տարի առաջ լրագիրներում տպվեց Մուշի առաջնորդի մի նամակը, ուղղած պանդուխտ մշեցիներին։ Առաջնորդը յիշեցնում էր պանդուխտներին, որ նրանք պարտաւոր են չը մոռանալ իրանց կանանց։ Հեռանալ կը լինի մի տարով, երկու, երեք տարով, բայց ոչ անվերջ ու անսահման։ Հեռանալ կը լինի, բայց յիշելով, որ ետևում մարդիկ են մնացել, որոնց վերաբերութեամբ այդ հեռացողները որոշ պարտաւորութիւններ են յանձն առել Աստուծու և եկեղեցու առաջ։ Եւ նա, առաջնորդը, անտէր-անտիրական մնացած, լքված կանանց բերանից պահանջում էր, որ պանդուխտները վերադառնան իրանց յարկերի տակ կամ թէ ազատեն իրանց կանանց ամուսնական պարտաւորութիւններից, թոյլ տալով, որ նրանք ամուսնանան ուրիշների հետ։

Այս էր ահա մշեցի կանանց գանգատը։ Սպառվել է խեղճերի համբերութիւնը. դարաւոր ահռելի կացութիւնը պատռվել է, ճաքճաքվել, այլ ևս կանգուն չէ մնում հնութիւնը և սոսկալի անարդարութիւնը հրապարակով դատ ու վճիռ է պահանջում։

Ի՞նչ եղաւ այդ գանգատը։

Գրեցին, խօսեցին, լռեցին, նորից գրեցին, նորից լռեցին։ Ո՞վ էր մեղաւորը։ Արդեօք պանդուխտ մշեցին է իր օտարութեան մէջ ենթարկվել ժամանակի աւերիչ ազդեցութեան և այլ ևս ոչինչ ձգողական ոյժ չէ գտնում Մուշի «խօրօտիկների» մէջ։ Արդեօք մեծ քաղաքները իրանց ծախու կանանցով, իրանց սիֆիլիսով սպանել են ընտանիքի հասկացողութիւնը մշեցու մէջ, թէ Մուշի հայուհին է այնքան ենթարկվել ժամանակի հասկացողութիւններին, որ այլ ևս չէ կամենում տանջվել օր ու գիշեր, տանջվել տարիներով, կռունկին և արագիլին պատմել իր սրտի ցաւը, իր կսկիծը, ինչպէս անում էին առաջ լոկ այն պատճառով, որ եկեղեցու բեմի առաջ խօսք էին տուել հաւատարիմ մնալ իրանց ամուսիններին։

Չը կարծէք թէ մշեցին միայն Կովկաս է գալիս։ Ոչ, աւելի մեծ քանակութեամբ նա դիմում է Կ. Պօլիս, հետևաբար դժուար չէ նրա համար տուն վերադառնալը, ինչպէս դժուար է մեր կողմերից վերադառնալը։ Լսելով իր կնոջ, իր օջախի բողոքը, ի՞նչ արաւ Կ. Պօլսի և Թիւրքիայի այլ կողմերի մշեցին։ Ես յիշում եմ, որ մի քանիսները փորձեցին լրագրի միջոցով բանակռիւ սկսել իրանց կանանց հետ, ապացուցանել թէ իրանք մեղաւոր չեն։ Բայց ապացուցեցի՞ն։ Հազիւ թէ։ Խօսեցին, որ ծանր հարցը լուծել կարելի է մարդասիրութեամբ։ Ինչո՞ւ տանջել խեղճ մշուհիներին, ինչո՞ւ հարկադրել, որ նրանք յաւիտեան ամուսնական կեանքի քաղցրութիւնը չը ճաշակեն։ Լաւ կը լինի, որ ամուսնալուծութիւնը միշտ պատրաստ լինի պանդուխտի կնոջը օգնելու համար։ Երբ ուրիշ ճար չը կայ, երբ ընտանեկան յարկը, երեխաները չեն կարողանում պոկել մշեցուն պանդխտութեան գրկից, պէտք է գոնէ խղճալ անմեղ կնոջը և թոյլ տալ նրան մի ուրիշ ամուսին գտնել։

Ասացին, լռեցին։ Բայց չը լռեց կեանքը։ Իրականութիւնը մազի չափ չը փոխվեց և այսօր նոյն գանգատը, նոյն պահանջը, ինչպէս հաղորդում են Պօլսի լրագիրները, նորից հրապարակ է հանված։

Հայ ժողովրդի առաջ պատմութիւնը միշտ դնում էր ծանր, գլուխ պատռող դիլլէմաներ։ Վճռել չէր կարողանում դժբախտը և չարունակ հալվում, ոչնչանում էր։ Մի և նոյն գործողութիւնը այժմ էլ կատարվում է։ Ոչնչացնողը, սպառողը միայն կոտորածը չէր, միայն բարբարոսական սուրը չէր։ Ահա մի դիլլէմա։ Եւ ո՞վ կասէ թէ՞ նա պակաս ահռելի է, քան կոտորածը, սուրը։

Ես սարսափով տեսայ մշեցի գանգատվող կանանց թիւը։ Գիտէ՞ք որքան է։—Երեք հազար, ընթերցող։

Երեք հազար լքված, երեսի վրա թողնված կանայք։ Ի՞նչ է դա նշանակում։ Այն, որ Մուշում և շրջականերում երեք հազար տուն խաւար է, սգաւոր։ Ի՞նչ սոսկալի քանակութիւն մի փոքրիկ երկրի համար, մի երկիր, ուր հայ տարրը առանց այդ էլ թուլացած է։

Ի հարկէ, բոլոր մշեցի պանդուխտները չեն անբարեխիղճ, քարասիրտ։ Անշուշտ շատ շատերը կան, որոնք իրանց կանանց այդ աստիճանի յուսահատութեան չեն հասցնում, որոնք գնում են, վերադառնում են, դարձեալ գնում։ Երեք հազարը միայն այնպիսիներն են, որոնք կորցրել են իրանց յոյսը, որոնք տանել չեն կարողանում իրանց դժբախտութիւնը։ Երեք հազար ամուսնալուծութիւն է հարկաւոր, որպէս զի ընտանեկան փոքր ի շատէ բախտաւոր կեցութեան համար հնարաւոր չը լինի այլ ևս, որպէս զի վեց հազար աչքեր դադարեն արտասուքի գոնէ մի տեսակը թափելուց։

Յայտնի է, որ մշեցին մի քանի տեսակ արտասուքներ ունի։ Թափում է նա բոլոր տեսակները, թափում է միշտ, բայց դարձեալ անտարբեր չէ դէպի իր աչքերը և ուզում է նրանցից պակասեցնել գոնէ ամուսնական անբախտութեան արտասուքները։ Ինձ թւում է, որ այդ ցանկութիւնը առաջնակարգ է։ Ինձ թւում է, որ երեք հազար հայուհիներ համեմատաբար հեշտ կերպով կը տանեն արտասուքի միւս բոլոր տեսակները, եթէ իրանց մօտ ամուսիններ ունենան։

Եւ յետոյ կանանց բողոքի մէջ խօսում է մի ազգի ինքնապաշտպանութեան բնազդը։ Երեք հազար դատարկ ամուսնական առագաստները բաւական են, շատ բաւական, որ մի ժողովուրդ գնալով, հետզհետէ սպառվի առանց հարկադրող պատճառների, առանց քրդի, ինքն իրան, խաղաղ ու աննկատելի կերպով։ Ինքը բնութիւնն է բողոքում կանանց բերանով։ Ինքը բնութիւնն է հարցնում, թէ կարո՞ղ է որ և է բարօրութիւն, որ և է տնտեսական ոյժ լինել մի երկրում, ուր երեք հազար տուն հասել է այն դրութեան, որ նոյն իսկ հայի աւանդական օջախը, նահապետական ամուսնութիւնը այլ ևս ոյժ չունի քայքայման, ոչնչացման առաջն առնելու համար։

Ահա աղէտ, իսկական աղէտ, որ ոչ երկրաշարժից է առաջանում, ոչ ջրհեղեղից, ոչ բարբարոս սրից։ Ես, ի հարկէ, շատ լաւ եմ հասկանում այն պատճառները, որոնք դարերի ընթացքում պանդխտութեան նման հրէշի են պահում, սնուցանում մեր տան մէջ։ Ես սիրտ չեմ անի մեղադրել երկրից երկիր թափառող մշեցուն, քանի որ գիտեմ թէ ինչ հանգամանքների նահատակ է նա։

Բայց և այդպէս, իմ համակրութիւնը աւելի այն կողմն է, այն երկրում, ուր երեք հազար կանայք են ողբում։ Խոնարհվում եմ մշեցի մշակի աննկարագրելի չարքաշութեան, դառն օրերի առաջ. նրա քրտինքը, նրա յարատև հառաչանքը այնքան փոքր ու աննշան չեն, որպէս զի կարելի լինի նրանց վերաբերմամբ բարեկամ չը լինել։ Բայց, կրկնում եմ, հողի վրա նստած կինը աւելի արժանի է կարեկցութեան, ափսոսանքի։ Նա նահատակ է աւելի մեծ չափով, նա մեռնող երկիրն է։

Բայց ի՞նչը պիտի փրկէ այդ խեղճերին։

Այս հարցի պատասխանն էի ես որոնում Պօլսի լրագիրների մէջ։ Ի՞նչ են մտածում այնտեղ։ Դարձեալ խօսում են ամուսնալուծութեան մասին։ Գուցէ դա միջոց է—խօսք չունեմ, թէև մեծ հարց է թէ երեք հազար կանայք որտեղից պիտի ամուսիններ գտնեն մի երկրում, որ ամբողջապէս ենթարկված է պանդխտութեան համաճարակին։

Հարցը պարզված չէ, ուսումնասիրված չէ։ Եւ հարկաւո՞ր է ուսումնասիրել։ Պօլսի լրագիրները այդ դառն, ցաւագար հարցը դրել են իրանց էջերի մէջ ոչ թէ նրա համար արմատական ճար գտնելու համար, այլ մի աւելորդ անգամ էլ աստուածաբանական նրբամտութիւնների մէջ վարժվելու համար։ Երեք հազար կանանց բախտը չէ գլխաւորը, այլ այն՝ թէ կարելի՞ է հեշտութեամբ պսակ լուծել, դէմ չէ՞ դա եկեղեցական օրէնքներին։

Այստեղ էլ ինչպէս միշտ.—եկեղեցի պաշտպանել, ժողովուրդ մոռանալ։ Քարը, գիրը, աւանդութիւնը կանգուն պահել, երբէք չը մտածելով թէ ո՞ւմ համար...

Ոչ, հայ ժողովուրդը չէ կարող նոյն իսկ թեթև հարցեր վճռել իր օգտին։ Նրան վիճակված է ոչ թէ ազատվել հարցերից, այլ չարունակ տրորվել հարցերի տակ։ Տրորվել, մաշվել... Լ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Шарлотта Стетсонъ: „Женщины и экономическое отношеніе“ 367 стр. Цѣна 1 руб. 1902 г.
Շարլոտտա Ստետսօն. „Կանայք և տնտեսական յարաբերութիւնը“։

Հասարակական կեանքը միշտ փոփոխվում է, միշտ առաջադիմում։ Ոչ մի անհատ, ոչ մի կազմակերպութիւն չէ կարող երկար պահպանել հասարակութեան համար վնասակար կարգերը, օրէնքներն ու սովորութիւնները։ Եկեղեցական, պետական ու հասարակական ձևերը միշտ առաջ են գնում և ոչ մի ոյժ, ոչ մի զէնք չէ կարող այդ հոսանքը կանգնեցնել, եթէ նա ժամանակի հասունացած պահանջ է։

Ահա այդպիսով պահանջ է և կանանց ազատութիւնը, որի համար քաղաքակիրթ երկիրներում վաղուց արդէն սկսվել է ուժեղ շարժում։

Կանանց շարժումը օրէցօր զօրեղանում է և հետզհետէ աւելի ու աւելի արդիւնաւէտ դառնում։ Բայց չը նայելով այդ հանգամանքին, դեռ կան շատերը, որոնք պնդում են, թէ կանանց շարժումը վնասակար է, թէ կանանց ազատութիւնը կարող է մի մեծ չարիք դառնալ մարդկութեան համար։

Դրա պատճառը հասկանալի է։ Հասարակութիւնն այնքան վարժվել է դարերի ընթացքում հաստատված ներկայ կարգերին, որ վախենում է փոփոխութիւններից, որ ենթադրում է, թէ կորստաբեր կարող են լինել այդ փոփոխութիւնները։

Հարկաւոր են ուրեմն եռանդուն ջանքեր այդ թիւր հասկացողութիւնը վերացնելու, այդ հարցը հիմքից պարզելու և լուսաբանելու համար։ Հէնց այդ պատճառով էլ մի առանձին արագութեամբ հարստանում է ֆէմինիզմին վերաբերեալ գրականութիւնը, բազմանում են կանանց հարցը այս կամ այն տեսակէտից քննող գրուածքները։

Սակայն այդ գրուածքներից շատ քչերն են արժանացել այնպիսի հռչակի, այնպիսի ուշադրութեան, որպիսին տաղանդաւոր ամերիկուհու ներկայ աշխատութեանը վիճակվեց։

Այդ աշխատութիւնը առաջին անգամ լոյս է տեսել անգլիերէն լեզուով 1898 թ., իսկ մինչև օրս արդէն թարգմանված է գրեթէ բոլոր եւրոպական լեզուներով, ամեն տեղ զարթեցնելով բուռն համակրանք և հետաքրքրութիւն։

Ստետսօնը իր հայրենիքում յայտնի է ոչ միայն իբրև շնորհալի գրող, այլ և իբրև դասախօս ու ճառախօս։ Նրան զբաղեցնողը սօցիալական շարժումն է իր բազմազան հարցերով ու երևոյթներով։ Նրա գրուածքների գլխաւոր նիւթն է էվօլիւցիան՝ իր պէս-պէս գործօններով։

Նշանաւոր է ներկայ աշխատութիւնը, բայց ոչ այնքան իր արծարծած խնդրով, որքան հայեացքով։ Ուրիշ հեղինակներ քննում են կանանց հարցը բարոյականութեան կամ ֆիզիօլօգիայի, պատմական կամ իրաւաբանական տեսակէտից, իսկ Ստետսօն վերցնում է հարցի հիմքը—տնտեսական գործօնը։

Նա չափազանց հետևողականութեամբ, տրամաքանօրէն ու փաստալի կերպով վերլուծում է կանանց անբնական դրութիւնը, տնտեսական ոչ անկախ վիճակը և դրանցից առաջացած կործանաբեր հետեւանքները։

Նա կանանց ազատութիւնը համարում է մի համամարդկային հարց և, ընդհանուր սօցիալական էվօլիւցիայի տեսակէտից քննելով այդ հարցը, գալիս է այն եզրակացութեան, թէ ամբողջ մարդկութեան համար աւելի քան անհրաժեշտ է օր առաջ ազատել կանանց ներկայ ստրկական վիճակից, հնարաւորութիւն տալով նրանց տնտեսական անկախութիւն ձեռք բերելու։

Միայն այդ անկախութեան շնորհիւ կինը կարող է կանգնել իր կոչման բարձրութեան վրա, իբրև մարդ, իբրև մայր, տնտեսուհի և հասարակութեան անդամ։

Այդ իրողութիւնն աչքի առաջ պիտի ունենան մանաւանդ կանայք։ Նրանք հաւատացած պիտի լինեն, որ տնտեսական անկախութիւնից է կախված իրանց հասարակական դիրքը և ամուսնական ու ընտանեկան երջանկութիւնը։ Իսկ այդպիսի անկախութիւն ձեռք բերելու համար անհրաժեշտ է աշխատել։

Թող ուրեմն ամեն մի կին դեռ մանկութիւնից սովորէ աշխատել, սեփական քրտինքով ապրուստ ձեռք բերել։ Թող նա աշխատէ, որովհետև աշխատանքը ազնուացնում է մարդու մարմինն ու հոգին։

Թող նա հեռու մնայ հասարակական կեղծ բարքերից, իր սիրած զարդ ու զարդարանքից և դրա փոխարէն ձգտէ դէպի ինքնուրոյնութիւն, դէպի մարդկային իսկական արժանապատուութիւն, որովհետև միայն այդ ճանապարհով կարող է հասնել տենչալի նպատակին։

Սուետսօնի գիրքը գրված է մատչելի լեզուով և սկզբից մինչև վերջը կարդացվում է հետաքրքրութեամբ։

Ե. Թ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Յունվարի 7-ին

Ինչպէս ամեն տարի, այս տարի էլ Մարդասիրական ընկերութիւնը ճրագալոյցի երեկոյեան Թաթախման հոգ էր տարել տեղիս չքաւորների համար։

Ընկերութեան ձրի ճաշարանի դահլիճում և աշխատանքի տան մի մասում բացված էին սեղաններ հարիւր յիսուն հոգու համար։ Յատկապէս հրաւիրված էին նաև հարիւրի չափ հայ զինւորներ Թաթախվելու համար։ Տիկիններից և օրիորդներից բաղկացած ճաշարանի մասնաժողովը անմիջական ծառայութիւն էր մատուցանում և առատօրէն պանիր, ձուկ, փլաւ և գինի մատակարարում...

Հայրենի հողից, Ջրից, սիրելի ընտանիքից հեռացած զինւորը բազմախորհուրդ և քաղցր յիշողութիւնների հետ կապված Թաթախման է արժանանում, անարգանքի ենթակայ դարձած, տան շէմքերից հալածվող մուրացկանը մեծարանքի, պատուի, հիւրասիրութեան է հանդիպում, կոյր հնազանդութեան գերի դարձած, մարդկային արժանաւորութիւնից ձեռք քաշած անհատը յարգանք, պատիւ է ստանում, և ումնից—մի խումբ նազելի տիկիններից և օրիորդներից... Ի՜նչ սքանչելի հիասթափումն ընթացիկ կեանքի դառն իրականութիւնից յետոյ։

Ընթրիքը վերջացաւ և ուրախ տրամադրութեամբ. առաջարկվեցան նոյն իսկ «կենաց»ներ, տեղի ունեցաւ և երգեցողութիւն։ Ուրախ և գոհ էին երևում կարգադրիչ տիկինները և օրիորդները. իրաւունք ունէին գոհ լինելու, բարոյապէս վարձատրված տեսնելով իրանց։

Ականատես լինել այս բոլորին և չարձանագրել իսկականը, անկարելի է։ Խօսքս այդ խումբ տիկինների և օրիորդների մասին է։ Կար ժամանակ, որ մեզանում ամեն մի հասարակական գործ, ամեն մի ձեռնարկութիւն արվում էր շատ յաճախ «ցոյց»-ի համար։ Ցուցամոլութիւնը մեծ դեր էր խաղում։ Ճիշտ է, թէև որոշ չափի աշխատանք գործ էր դրվում, այս և այն ծառայութիւն մատուցանվում էր, բայց այդ բոլորի մէջ առաջ մղողը լինում էր ո՛չ թէ նպատակը, այլ այս կամ այն՝ անձնական, անհատական ձգտումը, ցանկութիւնը։ Եւ այնքան գործ չէր տեսնվում, որքան խօսվում էր, աղմուկ բարձրացնվում և աչքի ընկնելու քայլեր արվում։ Այս, թերևս բնական, երևոյթը անցնելու վրա է արդէն։ Այժմ աչքի են ընկնում գործիչներ, որոնք ոչ միայն խոյս են տալիս «աչքի ընկնելուց», այլ առանց որ և է աղմուկի, համեստ կերպով աշխատում են իրանց պարտքը կատարած լինելու։ Այդպիսիների կարգին է պատկանում և վերոյիշեալ խումբը։ Հարիւրաւոր ընտանիքների իւղ, բրինձ, ձուկ և հաց բաժանել, հարիւրաւոր մարդկանց համար պատրաստութիւն տեսնել, սեղան պատրաստել, առաւօտից մինչև երեկոյ ոտի վրա լինել, արհամարհել ցուրտն ու անախորժութիւնները, ուշադրութեան չառնել տօն օրերի հետ կապված խնդութիւնները ու վայելքները—այդ միմիայն կարող են անել իսկական գործիչները, գաղափարի անկեղծ ծառայողները։ Եւ այդ ոչ միայն մի անգամ, պատահական կերպով, այլ պարբերաբար, շարունակ։ Տարիներ գալիս անցնում են, միշտ նոյն նեղութիւնը, նոյն սև աշխատանքը նոյն խմբի վրա է ծանրանում, նոյն 8—10 հոգու վրա բարդվում. և նրանք կրում են լռելեայն, առանց կարիք զգալու ծափահարութիւնների, հրապարակական խրախուսանքների...

Մարդասիրական ընկերութիւնը բացի 200 հոգու համար ընթրիք պատրաստել տալուց, կարգադրած էր բաժանելու և հում նիւթ՝ իւղ, բրինձ և այլն այն չքաւոր ընտանիքներին, որոնց դրութիւնը նախօրէն ստուգած էր։

Բացի դրանից բաժանվել է կանխիկ փող նոյնպէս այն ընտանիքներին, որոնց դրութիւնը ստուգելուց յետոյ, գտել են օգնութեան կարօտ։

Ջրօրհնէքից մի քանի օր առաջ ընկերութեան վարչութեան անդամներից չորս հոգի, երկու խմբի բաժանված՝ շրջել են չքաւորների տները թէ քաղաքում և թէ քաղաքից դուրս՝ «Հայկական գաղութ» կոչված բնակավայրում—և տեղն ու տեղը փողեր բաժանել։ Տօների առիթով բաժանել են նաև հանդերձեղէններ։ Սովորական «հայկական» կոչված երեկոյթը, որ տեղի է ունենում յօգուտ Մարդասիրական ընկերութեան գրադարանի, նշանակված է փետրվարի 13-ին, Վարդանանց տօնի օրը. արդէն ձեռնարկված է նախապատրաստութեան։

«Գրադարան» ասելով՝ յիշեցի ուրախալի մի դէպք։ Հանգուցեալ հնագէտ Աղ. Երիցեանի հարուստ մատենադարանը գնել է պ. Դաւիթ Իւզբաշեանը և մտադիր է, ինչպէս լսեցի, նուիրելու Էջմիածնի թանգարանին։

Ն. Դաւթեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, կաղզուանցի Զաքար Ջամփօլադեան վաճառականը երեք գործ էր սկսել մեր աշխատակիցներ Եզնիկ վարդապետ Մուրադեանի, Աւետիս Տէր-Ներսէսեանի և Մեսրոպ Ղազարեանի դէմ, մեղադրելով նրանց զրպարտութեան մէջ։ Առաջին երկու գործերը արդէն քննվեցին անցեալ տարի Թիֆլիսի նահանգական դատարանում, որը արդարացրեց մեղադրվածներին։ Գալով Մեսրոպ Ղազարեանի դէմ յարուցած զրպարտութեան գործին, Թիֆլիսի նահանգական դատարանը, լսելով այս օրերս Ղազարեանի պաշտպան Տիգրան Յովհաննիսեանի խնդրագիրը, որոշեց դադարեցնել այդ գործը, այն հիման վրա, որ Զ. Ջամփօլադեանի փաստաբանը, գանգատվելով պ. Ղազարեանի դէմ, ներկայացրել էր ընդհանուր հաւատարմաթուղթ Ջամփօլադեանի կողմից, մինչդեռ զրպարտութեան գործ սկսելու համար անհրաժեշտ է յատուկ լիազօրութիւն։ Եւ որովհետև Ղազարեանի յօդուածը «Մշակի» մէջ տպվելուց յետոյ անցել է արդէն երկու տարի, ուստի օրէնքով այլ ևս գործ սկսել անկարելի է։

—

«Յնօրիս Փուրցէլի» լրագրին Մօսկվայից հաղորդում են, որ Ի. Ժամհարեանցին սպանող Ակոբջանեանցի գործը քննվելու է զինուորական դատարանում։

—

Յունվարի 9-ին, Թիֆլիսի դատաստանական պալատում քննվեց Շամախու հայոց կօնսիստորիայի պահանջի գործը ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան դէմ Բագուի հայոց եկեղեցուն կից տան սեփականութեան մասին։ Մեր ընթերցողները արդէն գիտեն, որ Բագուի նահանգական դատարանը, քննելով այդ գործը, արդարացի էր գտել կօնսիստորիայի պահանջը և վճռել էր, որ Կովկասի ուսումնարանական վարչութիւնը վերադարձնէ տունը հայոց եկեղեցուն, իբրև նրա սեփականութիւն։ Սակայն Կովկասի ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուի բողոքով գործը անցել էր դատաստանական պալատը։ Կօնսիստորիայի շահերը պաշտպանում էր փաստաբան Սամսօն Յարութիւնեան, իսկ մինիստրութեան շահերը Բագուի նահանգի ժողովրդական դպրոցների վերատեսուչ Տիօրժէվսկին։ Իր բողոքագրի մէջ ուսումնարանական վարչութիւնը հիմնվում է այն բանի վրա, թէ որովհետև տան մէջ զետեղված էր դպրոցը, ուստի տունը դպրոցի սեփականութիւնն է և ոչ եկեղեցու. երկրորդ, նա մատնացոյց է լինում Բագուի Մարդասիրական ընկերութեան և քաղաքային դումայի մէջ եղած գրագրութեան վրա 1887-ին։ Կօնսիստորիայի պաշտպան Յարութիւնեան, ի հերքումն այդ բողոքագրի, յայտնեց պալատին, թէ ուսումնարանական վարչութիւնը անկանօն է մեկնել 1898 թ. մարտի 26-ին կայացած Բարձրագոյն հրամանի իսկական միտքը և եղծել է Բագուի հայոց եկեղեցու իրաւունքները, գրաւելով եկեղեցապատկան գոյքը, որովհետև ուսումնարանական վարչութեան իրաւունք է տրված 1897 թ. յունիսի 2-ի Բարձրագոյն հրամանով իր իրաւասութեան ներքոյ վերցնել միայն այն շինութիւնները, որոնք կազմում են հայոց դպրոցների սեփականութիւն, իսկ տունը, ինչպէս ցոյց են տալիս բոլոր դօկումենտները, հայոց եկեղեցու սեփականութիւնն է։ Նոյն օրը պալատը քննեց և Շամախու կօնսիստորիայի համանման մի պահանջը Դերբենտի հայոց եկեղեցու տան սեփականութեան մասին։ Դատաստանական պալատը որոշեց իր վճիռը այդ երկու գործերի մասին յայտնել յունվարի 18-ին։

—

Կովկասեան հանքային ջրերի և կուրորտների անբարեկարգութեան մասին «Մշակի» մէջ անցեալ տարի տպված լուրի և բժիշկ Թադէոսեանի իբրև հերքումն տպված յօդուածի առիթով, մենք ստացանք մի ուրիշ բժշկից հետևեալ լուրը. «Медицинское Обозрѣніе» հանդէսի 1902 թուի վերջին համարում տպված է տեղեկութիւնների շարքում հետևեալը. «Նոյեմբերի 20-ին, ժողովրդական առողջութեան պահպանութեան ընկերութեան նիստում երեք զեկուցանող բժիշկներ ըստ արժանոյն բնորոշեցին Էսսենտուկի կուրորտը։ Բժշկապետ Գօմօլիցկօ վատ գոյներով նկարագրեց առողջապահական և այլ պայմանների դրութիւնը—ցեխ, խոնաւ բնակարաններ, վատ ուտելիքներ ճաշարաններում և նոյն իսկ արքունի հիւանդոցում։ Եկւոր հիւանդները յաճախ ոչ բնակութիւն են գտնում, ոչ ուտելիք։ Պրոֆէսօր Շտանգէ իր լայն պրակտիկայից այն եզրակացութիւնը հանեց, որ ընդհանրապէս Էսսենտուկիի բժշկութեան հետեւանքները շատ նպաստաւոր են։ Աղիքներով և փայծաղով հիւանդներից բժշկվում են 60—80%-ը։ Ջղային և կրծքային հիւանդութիւնները Էսսէնտուկիում չեն զիջում բժշկութեան, նոյն իսկ վատթարանում են այն զարհուրելի կենցաղային պայմանների պատճառով, որոնց մէջ հիւանդները ստիպված են ապրել։ Ինչ որ արել է գանձարանը ջրերի համար, լաւ է, բայց այնու ամենայնիւ հիւանդները վատ են ապրում։ Հարկաւոր է յանձնել կուրորտը բժշկի խնամքներին և ոչ ինժեների, ինչպէս այժմ։ Վիճաբանութիւնները հաստատեցին ջրերի արժէքը և բարեկարգութեան անհրաժեշտութիւնը։ Եւ այդպիսի նկարագրութիւնից յետոյ—աւելացնում է բժշկական հանդէսը—մեր ամենալաւ կուրորտի այդպիսի վիճակից յետոյ, դեռ գտնվում են հռետօրներ բժիշկների մէջ, որոնք զայրանում են, թէ ինչու շատ ռուս հիւանդներ նախամեծարութիւն են տալիս արտասահմանեան բարեկարգված ջրերին և ոչ ռուս կուրորտներին, որոնք փայլում են կեղտոտութեամբ և արևելեան ամեն տեսակ ապականութեամբ»։

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ մեզ գրում են. «Գրիգոր Արծրունու յիշատակը յարգող մի խումբ երիտասարդներ երէկ, յունվարի 3-ին, կազմակերպել էին մի գրական երեկոյթ, նուիրված Գր. Արծրունու մահվան տասնամեակին։ Երեկոյթը գրաւել էր երկու սեռից մեծ բազմութիւն։ Ծրագիրը կազմված էր բաւական նպատակայարմար։ Պ. Զ. ռուսերէն լեզուով կարդաց Գր. Արծրունու համառօտ կենսագրութիւնը։ Ապա պ. Խ., օր. X. և Շւոտ կարդացին մի մի պատշաճ ռէֆէրատ։ Կարդացվեցին և մի քանի ոտանաւոր ու «Մշակից» մի քանի առաջնորդողներ և կիրակնօրեայ զրոյցներ։ Շնորհալի ջութակահար պ. Համբօի խումբը նուագեց մի քանի հայկական երգեր, որոնք թողին շատ լաւ տպաւորութիւն մեզ վրա։ Օր. Կ. նուագում էր դաշնամուրի վրա։ Երեկոյթից յետոյ տեղի ունեցան հայկական պարեր, որոնք անցան շատ աշխոյժ։ Շնորհակալութիւն պ. Է.-ին, որ բարեհաճեց իր տունը դնել այդ երեկոյթին մեր տրամադրութեան տակ։ Յունվարի 6-ին, երկուշաբթի առաւօտեան, տեղիս հայոց եկեղեցում կատարվելու է հոգեհանգիստ վաղամեռիկ Վահան Նալբանդեանի յիշատակին, որի մասին երեկոյթից յետոյ յայտնվեց հասարակութեան»։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Յունվարի 6-ին, Ջրօրհնէքի հանդիսի ժամանակ, անցեալ աշնան վերջերից Գանձակում մշտական բնակութիւն հաստատած Շէմախեան հետևակ գունդը, բրիգադային գեներալ Ձիէյչերի ու գնդի հրամանատարի կարգադրութեամբ, առանձին զինուորական պատիւներ տուեց հայոց եկեղեցական թափօրին։ Երբ վերջինս գետից վերադառնում էր եկեղեցի, գունդը պատշաճաւոր երաժշտական նուագածութեամբ ուղեկցում էր նրան. հայոց եկեղեցու մօտ գունդը շարվեց, օրհնութիւն ստացաւ ու յետոյ միայն ուղևորվեց իր զօրանոցները։ Այդպիսի ասպետութիւնը Շէմախեան գնդի կողմից ազգաբնակութեան մէջ բնականաբար յարգանք է ծագեցնում դէպի նրա ղեկավարներն ու սպայակոյտը»։

—

ԹԵԼԱՒԻՑ մեզ գրում են. «Շնորհաւորում եմ «Մշակ» լրագրի 31-րդ ամեակը։ Խմբագրութեանդ անխոնջ մշակներին ցանկանում եմ յարատև և բեղմնաւոր գործունէութիւն իրանց ընտրած արդիւնաւոր, բայց փշոտ ասպարէզի վրա»։

—

ՔԻՇԻՆԷՎԻՑ մեզ գրում են. «Բեսարաբիայի թեմի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսը այս օրերս ուղևորվում է Նահապետ վարդապետի ուղեկցութեամբ դէպի Նոր-Նախիջևան, որտեղ մնալու է մօտ մէկ ու կէս ամիս։ Թէ ինչն է դրդում այս առաջիկայ տօներին դիմել Նոր-Նախիջևան—առ այժմ դժուար է բացատրել»։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ գրում են. «Տասը տարի է, որ չը կայ Արծրունին. բայց արդեօք նրա հետ անհետացե՞լ են իր արծարծած մտքերն ու գաղափարները, արդեօք նրա մարմնի քայքայման հետ ոչնչացե՞լ են իր պաշտպանած սկզբունքները։ Ոչ։ Այդ բանին վկայում է «Մշակի» տասնամեայ գոյութիւնը, նրա անսայթաք ուղղութիւնը և աշխարհիս զանազան կողմերում ապրող հայերի զգացմունքների արտայայտութիւնը և համակրանքը դէպի Արծրունու մահվան 10-ամեայ յիշատակը։ Մենք ևս կենտրօնից հեռու և անջատված աստրախանցիքս անտարբեր չը մնացինք յարգելու մի այդպիսի մեծ մարդու յիշատակը և կիրակի, դեկտեմբերի 29-ին, կատարեցինք հոգեհանգիստ ս. Աստուածամօր աւագ եկեղեցում, որտեղ հաւաքվել էր տեղիս հայ հասարակութիւնը։ Հոգեհանգստի ժամանակ խօսեց Ս. քահանայ Աղաբալեանցը ցանկութիւն յայտնելով, որ Արծրունու յիշատակը յարգէին մի կենդանի գործով։ Հոգեհանգստից անմիջապէս յետոյ ներկայ եղողները որոշեցին 20 օրինակ «Մշակի» բաժանորդագին հանգանակել և այդ գումարը դնել խմբագրութեան տրամադրութեան տակ, «Մըշակ», ուղարկելու իր իմացած տեղերը, որ և իրագործվեց։ Նոյն երեկոյեան Արծրունուն յարգողների մի խումբ ընտանեբար հաւաքվեց իր մի ընկերոջ մօտ, մի քանի ժամ նուիրելու անմահ հրապարակախօսի յիշատակին։ Առաջին խօսքը ասեց Գ. քահանայ Մկրտումեանը Արծրունու կենսագրութեան, գործունէութեան և նշանակութեան մասին։ Պ. Վ. Փափազեան խօսեց իր ծանօթութեան մասին Արծրունու հետ. մէկ տիկին կարդաց Արծրունու այն առաջնորդողներից, որտեղ նա կանանց իրաւունքներն էր պաշտպանում. մի քանի երիտասարդներ կարդացին նրա առաջնորդողներից, ֆէլիէտօններից և նրա յիշատակին նըւիրված ոտանաւորներ. մէկը տուեց նրա թաղման նկարագիրը, խօսվեց կուսակցութիւնների մասին. ապա երգվեցին զանազան ժողովրդական երգեր, նուագեցին և հիւրերը գոհ սրտով ցրվեցին։ Ցանկալի էր, որ այս տեսակ համակրանք ոչ թէ 10 տարէնը մի անգամ արտայայտվէր, այլ այդպիսի գործիչների յիշատակը շարունակ յարգէինք, նրանց արծարծած գաղափարները իրագործելով կեանքի մէջ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Նոր-Ջուղա, դեկտեմբերի 14-ին

Երէկ գիշեր տեղիս ազգային երկսեռ դպրոցների ուսուցչական խումբը կենտրօնական դպրոցի թատերական սրահում ներկայացրեց Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկաններ» և Տէր-Գրիգորեանի «Մաղօի կտակը» պիեսները։

Անսամբլը շատ լաւ էր. պ.պ. Գ. Պապեան և Ս. Ազնաւուրեան բաւական աջող խաղացին Աբիսողոմ աղայի և Մանուկ աղայի դերերը։ Մաղօի կտակը շատ թոյլ անցաւ։ Անտրակտներին երգում էր աշակերտական երկսեռ երգեցիկ խումբ երգեհոնի ձայնակցութեամբ։ Մինչև անցեալ տարի կար մի առանձին «երաժշտասիրաց խումբ», որ գերմանացի պ. Էմիլ Հէլդգըրի (մօր կողմից հայ) ղեկավարութեամբ բոլոր դպրոցական հանդէսներին և թատրոններին ձրիապէս նուագում էր ջութակի վրա, սակայն հոգաբարձութեան մի անխոհեմ ընթացքը քայքայեց խումբը և ցրվեց անդամներին։

Ներկայացմանը մեր բուրժուա դասակարգը փայլում էր իր բացակայութեամբ, այն պատճառով միայն, որ սիրողները իրանց թոյլ էին տուել այս անգամ նումէրներ նշանակել աթոռների վրա և այսպիսով վիրաւորել էին մեր աղաներին (!!?)։ Միթէ հանաք բան էք կարծում մի աղայի ասել այս ինչ տեղը նստիր։ Էլ ո՞ւր մնաց հապա նրա աղայութիւնը, եթէ մի վարժուհի, մի հասարակ մահկանացու պիտի համարձակվի նրան ասելու՝ այս ինչ նումէր աթոռի վրա նստիր։

Ցաւալին այն է, որ մեր հայերի մէջ նոյն իսկ իրար հետ չուն ու կատու եղողներն անգամ մի որ և է բարենպատակ գործի, կամ հասարակութեան վնասելու համար, իսկոյն միանում «ախպերանում» են։ Այսպէս էին արել և այս դէպքում. բոլոր աղաները միացել էին, որպէս զի ընդհանուր ոյժերով և միացած ջանքերով վնասէին գործին և փոխել տային այդ «անյարմար կանօնը», սակայն իզո՛ւր։ Միակ վնասը մի քանի ղռան պակաս եկամուտ ունենալն էր. դրա համար էլ կարելի է միայն ասել, «Թքել ենք քու ալ, փողիդ ալ վրան»։

Վ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսից գրում են «Arménie» լրագրին, որ այդտեղի պարսից լիազօր դեսպան Միրզա-Րիզա-Խանի բոլոր ջանքերը՝ աւելի մօտ և մտերիմ յարաբերութիւններ ստեղծել պարսից և թիւրքաց կառավարութիւնների մէջ, բոլորովին ապարդիւն մնացին։ Շահի սադրազամը, որ այժմ աթաբէկ-ազամ է, ոչ մի տրամադրութիւն ցոյց չը տուեց կատարել սուլթանի ցանկութիւնը, որ պարսից զօրքի համար մարզիչները լինեն թիւրք սպաներ և առհասարակ նա չը կամեցաւ օգուտ քաղել թիւրքաց դիպլօմատիայի առաջարկած ծառայութիւններից։ Այդ պատճառով սուլթանը զայրացաւ և, իբրև վրէժխնդրութիւն, հրատարակեց նորերս մի իրադէ արդարադատութեան մինիստրի անունով, որի մէջ հրամայում է այսուհետև չը ճանաչել պարսից դեսպանի և հիւպատոսների իրաւասութիւնը Թիւրքիայում ապրող պարսկահպատակների վրա և ենթարկել նրանց, թիւրքահպատակների պէս թիւրքաց օրէնքներին և դատարաններին։ Երբ պարսկահպատակը ենթարկվի քրէական պատասխանատւութեան, պարսից դեսպանատունը և հիւպատոսարանը իրաւունք չունեն այսուհետև նոյն իսկ իրանց թարգմանին ուղարկելու, որ հարցաքննութեան ներկայ լինի։ Այդ իրադէն ամենամեծ տպաւորութիւն գործեց պարսից դեսպանատան վրա ոչ միայն ընդհանուր քաղաքական նկատումներով, այլ և իրան դեսպանատան շահերի նըկատմամբ, որովհետև այդ դեսպանատունը ահագին եկամուտ ունի Կ. Պոլսում ապրող 60,000 պարսկահպատակներից։ Ենթարկելով այժմ այդ 60,000 հոգուն թիւրքաց օրէնքներին, դեսպանատունը ոչ միայն զրկվում է իր ահագին արդիւնքներից, այլ և պարսկահպատակները ենթարկվում են թիւրքաց դատարանների հանրածանօթ կամայականութեան։ Մեր կողմից պէտք է աւելացնենք, որ թիւրքաց սուլթանի զայրոյթի գլխաւոր պատճառը պէտք է որոնել և այն հանգամանքի մէջ, որ պարսից Շահը չը կամեցաւ յարել համիսլամականութեան ծրագրին։

—Ապրիլի 19/23-ին կը կայանայ Հռոմում երկրագործութեան միջազգային կօնգրէս։ Իբրև պատւաւոր նախագահներ ընտրված են՝ Մէլին, ֆրանսիական մինիստրական խորհրդի նախկին նախագահը, Րիբօ, Ֆրեդերիկ Պասսի, մարկիզ Վօգիւէ։ Բոլոր ազգերը ներկայացրված կը լինեն։

—Վեստմինիստէրի արքեպիսկոպոս կարդինալ Վօգան, յայտարարութիւններ տալով, բարձրաձայն աղաղակում է, որ կաթօլիկութիւնը վտանգի մէջ է Անգլիայում։ Մեզ հարկաւոր է, ասում է այդ հոգեւորականը, հազարից աւելի կամաւոր առաքեալներ, ոչ, տասը հազար առաքեալներ են հարկաւոր, որովհետև հազարներով են թողնում եկեղեցին նրանք, որոնք այդտեղ մկրտութիւն են ստացել։ Մեծ-Բրիտանիայի կաթօլիկները այսպէս են ցրված. 1,500,000—Անգլիայում, 433,000—Շոտլանդիայում և 3,310,028—Իրլանդիայում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

Ես մի ապառիկ ունեմ տալու։

Ես գերի էի ընկել երեք դեկադենտական օրիորդների մօտ և պէտք է պատմէի, թէ ինչ խօսակցութիւններ ունեցայ նրանց հետ։

Օրիորդները ինձ առաջնորդեցին դէպի դահլիճները, ցոյց տուին աչքի ընկնող կանացի զգեստները և բնորոշ նկատողութիւններ արին տղամարդկանց մասին։ Չը մոռացան տանելու ինձ դէպի օրիորդների մի շրջան, որտեղ ինձնից տուգանքներ պահանջեցին մի կտոր անուշեղէնի և մի բաժակ ջրի համար։

—Դեկադենտութիւնը մեր ներկայ կեանքի նշանաբանն է, ասաց օրիորդներից մէկը։

—Այո, այո, բացականչեցին միւսները։

—Ինչո՞ւ, ինչո՞ւ էք այդպէս կարծում, վրդովվեցի ես։

—Նայեցէք ձեր չուրջը, ասաց առաջին օրիորդը, և դուք կը համոզվէք, որ այդպէս է կեանքի մէջ։

Ես ուզեցի հակաճառել, բայց օրիորդները ինձ ընդհատեցին։

—Հետևեցէք մեզ, ասացին նրանք։

Մենք գնացինք։

—

Ես անուանում էի օրիորդներին իրանց իսկական անուններով. բայց նրանք խնդրեցին կանչել նրանց դեկադենտական ծածկանուններով։

—Ինձ կանչեցէք Հարփենիկ, ասաց նրանցից մէկը։

—Ինձ Տարփենիկ, վրա բերեց երկրորդը։

—Իսկ ինձ Գոփենիկ, եզրափակեց երրորդը։

—Օրիորդներ Հարփենիկ, Տարփենիկ և Գոփենիկ, ասացի ես, այժմ ձեր տրամադրութեան տակ եմ։ Ի՞նչ էք ասելու, ասացէք։

—

—Նայեցէք այստեղ, սկսեց օրիորդ Հարփենիկը, տեսնո՞ւմ էք թէ ինչ գեղեցիկ հագնված է այս տիկինը։

—Այո, ճիշտ որ, շատ շքեղ և գեղեցիկ է հագնված, համաձայնվեցի ես։

Մեր դիմաց նստած էր մի սիրունադէմ տիկին՝ նուրբ կերպասներով պճնված, խորհրդաւոր ժապաւէններով և ծոպերով։ Սանրուածքը բնորոշ էր և մազերի մէջ փայլում էին սանրակալներ։

—Ահա այս տիկինը աշխատեց և աջողեցրեց իր որդուն ուրիշի հաշւով ուսում տալու, բացատրեց Հարփենիկը։ Որդու համար փող չունի, իսկ պճնվելու համար գտնում է։ Դեկադենտութիւն չէ՞ արդեօք։

—Իրաւունք ունէք, մրմնջացի ես։

—Նայեցէք այս կողմ, խօսեց Տարփենիկը, տեսնում էք այս երկուսին, որոնք նստած են այն անկիւնում։

Ես նայեցի ցոյց տուած ուղղութեամբ և տեսայ մի ծերունի մարդու մի դեռահաս օրիորդի հետ։

—Ովքե՞ր են դրանք, հարցրեց Տարփենիկը, ինչ էք կարծում։

—Ես չեմ ճանաչում, ասացի ես, կարծում եմ, որ դա երևի պապն է, իսկ դա թոռը։

—Սխալվում էք, բացականչեց Տարփենիկը, դրանք ամուսիններ են. այդ պարոնը նորերս պսակվեց այդ մատաղահաս աղջկայ հետ։

—Ի՞նչ էք ասում, զարմացայ ես, անկարելի է։

—Իրականութիւն է և դառն իրականութիւն, վրա բերեց Տարփենիկը։ Այժմ հարցնում եմ ձեզ՝ դեկադենտութիւն չէ՞ դա արդեօք։

—Իրաւունք ունէք, համաձայնվեցի ես։

Տիրեց մի փոքր լռութիւն։ Գոփենիկը դիմեց ինձ և իմ ուշադրութիւնը հրաւիրեց մի խրոխտ պարոնի վրա, որ ներկայացնում էր հարաւի բնորոշ մի տիպ՝ սև մազերով, խիտ միրուքով, կրակոտ հայեացքով։

—Ինչպէ՞ս էք հաւանում պարոնին, հարցրեց Գոփենիկը։

—Տպաւորիչ դէմք ունի, նկատեցի ես։

—Նայեցէք նրա դեկադենտական գոյնզգոյն վզնոցին, առաջարկեց Գոփենիկը։

Նայեցի։

Վզնոցը կրում էր իր վրա մի գեղեցիկ քորոց։ Պարոնը նայում էր յաղթական հայեացքով։

—Ո՞վ է այդ պարոնը, հարցրի ես։

Գոփենիկը ուղիղ չը պատասխանեց իմ հարցին։

—Այդ պարոնը նորերս մի հազուագիւտ մարմարիոն ծախեց և լաւ գին վերցրեց։

—Մարմարիոն, բացականչեցի ես. միթէ՞ դա մարմարիոն վաճառելով է զբաղված։

—Ոչ, բացատրեց Գոփենիկը, այդ մարմարիոնը միակն էր, որ նա ունէր։ Այդ մարմարիոնը նրա հօր գերեզմանի վրա էր դրված։

—Ի՞նչ էք ասում, վրդովված խօսեցի ես, միթէ՞ նա ծախեց իր հօր գերեզմանաքարը։

—Այո, ժպտաց Գոփենիկը, շատ լաւ գին տուին և նա էլ ծախեց։

—Այդ անկարելի է, բացականչեցի ես։

—Ես էլ չեմ հաւատում, վրա բերեց Գոփենիկը, բայց ասում են։

—Ոչ, ոչ, անկարելի է, կրկնեցի ես զայրացած։

—

—Նայեցէք այս կողմ, խօսեց Հարփենիկը, տեսնում էք այս ժպտուն բժշկին։

—Այո, ինչ կայ։

—Սա միշտ քարոզում է, յայտնեց Հարփենիկը, որ ամենալաւ բժիշկը—առողջարար օդն է, սննդարար կերակուրը և կանօնաւոր շարժումը, իսկ ինքը մի գլուխ իր հիւանդներին պառկեցնում է անկողնում և կերակրում դեղօրայքով։

Միւս օրիորդները միմեանց նայեցին և քըմծիծաղ տուին։

—Այս բանում, ասացին նրանք, դուք շատ էլ մի հաւատաք օրիորդ Հարփենիկին, նա բարկացած է բժշկի վրա, այդ պատճառով բամբասում է։

—Ամենևին ոչ, բորբոքվեց Հարփենիկը, եթէ ուղիղն ասենք, դուք նրան պաշտպանում էք, որովհետև նրա վրա յոյս ունէք։

Օրիորդները փոքր ինչ վիճեցին և մերկացումներ արին։ Ես աւելորդ եմ համարում այդ միջադէպն առաջ բերել։

Այդ ժամանակ մօտեցաւ մեզ մի երիտասարդ, որ առաջարկեց օրիորդ Տարփենիկին պարել իր հետ։

—Ներեցէք, չեմ կարող, յայտնեց Տարփենիկը։

Երիտասարդը փոքր ինչ կանգ առաւ, նայեց պարողներին և յետոյ դիմեց մեզ.

—Ցաւում եմ, որ ուսանող չեմ, բացականչեց նա։

—Ինչո՞ւ, հարցրինք մենք, դուք այժմ էլ կարող էք ձեր ներկայ գործերը այնպէս կարգադրել, որ մի երկու տարի հնարաւորութիւն ունենանք լսելու գիտութիւններ։

—Ի՞նչ, լսել գիտութիւններ, իմ ինչի՞ն է հարկաւոր այդ, վրա բերեց նա։

—Ապա ինչո՞ւ էիք ուզում ուսանող լինել, հետաքրքրվեց օր. Տարփենիկը։

—Պարելու համար, բացատրեց երիտասարդը, որպէս զի օրիորդները ինձ չը մերժեն և ինձ հետ պարեն։ Տեսէք, պարողների մեծ մասը ուսանողներ են։

Տարփենիկը կարմրեց և դառնալով երիտասարդին սաստեց մատով։

—Ներում եմ ձեզ, ասաց նա, ձեր այդ սրախօսութիւնը տեղի ունի դեկադենտական պարահանդէսում, ուստի ներելի է։

—Դուք ինձ վիրաւորել էք ուզում, հարցրեց երիտասարդը։

—Ձեր պարտքն եմ ձեզ վճարում։

Երիտասարդը հեռացաւ և շուտով օրիորդներից մէկի հետ սկսեց պարել։

—Նայեցէք այստեղ, դիմեց ինձ Գոփենիկը։ Տեսնում էք այս Մեծ-Պասին։

Նա մատնացոյց եղաւ մի պարոնի վրա, որ մի կողմից գաւառական աստիճանաւորի, իսկ միւս կողմից հոգևորականի տպաւորութիւն էր գործում։

—Ո՞վ է դա, հարցրի ես։

—Դա մի պարոն է, որ լաւ պատրաստում է տիրացուներին տէրտէր դառնալու։

—Միթէ։

—Այո, նկատեց Գոփենիկը, դրա պատրաստածը անկարելի է, որ տէրտէր չը դառնայ։ Պահանջված ցենզը դրա շնորհիւ հրաշքներ է կատարում։

—Եւ արդեօք որքա՞ն ժամանակում է պատրաստում, հետաքրքրվեցի ես։

—Կարող է մի քանի ժամում, բացատրեց օրիորդ Գոփենիկը։ Դա գրաւոր ապացոյցներ է ներկայացնում իր աշակերտների գիտութեան մասին, թղթերով, վկայագրերով... ծրարների մէջ դրած։

Այդ ժամանակ մօտեցաւ մեզ մի պարոն, որ գնել էր դեկադենտական մի վզնոց և չը գիտէր թէ ինչ անէ նրան։

—Ինչո՞ւ չէք կապում վզնոցը, հարցրեց չարաճճի հայեացքով օրիորդ Տարփենիկը։

—Իմ սարֆ պան չի, ախպեր, ասաց նա կարմրելով։

Նրանից փչեց քեալլափաչի հոտ։

Մենք նրան հանգիստ թողինք։

Մեր մօտով անցաւ մի կին իր աղջկայ հետ։ Մայրը խօսում էր գռեհիկ հայերէն, աղջիկը ֆրանսերէն։

—Ամբողջ ժամանակը, բացատրեց Հարփենիկը, դրանք միմեանց տանջում են։ Մայրը չէ հասկանում աղջկայ ասածը, իսկ աղջիկը ձեռք չէ վերցնում իր ֆրանսերէնից։

Օրիորդ Տարփենիկը հրաւիրեց մեր ուշադրութիւնը մի խումբ երիտասարդների վրա, որոնք շրջապատել էին մի շքեղ օրիորդի և սիրալիր խօսում էին, երկրպագութիւններ նրան անելով։

—Այդ օրիորդը, բացատրեց Տարփենիկը, խելօք աղջիկ է և լաւ գնահատում է իր շրջապատողներին։ Նա հարուստ է և լաւ գիտէ, որ այդ ամբողջ խումբը միայն նրա հարստութեամբ է հետաքրքրված և ուրիշ ոչնչով։ Եւ տեսէք, ինչպէս դիւական ժպիտով նա խաղում է նրանց հետ։ Ոչ ոքի դրանցից նա չէ սիրում և չի սիրի։

—

Օրիորդները ինձ պատմեցին հետաքրքրական բաներ Սօլօլակի և եկւոր բնակիչների մասին. բայց ես չեմ կարող մի առ մի բոլորը առաջ բերել։

—Շունը տիրոջ չէ ճանաչում, ասաց օրիորդ Տարփենիկը։

—Ոչ ոք ոչ մի սրբութիւն չունի, բացականչեց օրիորդ Հարփենիկը։

—Ամեն բան առ ու ծախսի վրա է դրված, շեշտեց Գոփենիկը։

Գրան-րօնը խանգարեց մեր խօսակցութիւնը։

—

—Միթէ ճիշտ չէինք ասում, թէ դեկադենտութիւնը ժամանակի նշանաբան է, բացականչեցին օրիորդները։

—Ես դարձեալ համաձայն չեմ, պատասխանեցի նրանց։ Ձեր ասածների, պատմածների և ցոյց տուածների մէջ շատ կան տխուր երևոյթներ. բայց այս մարդկանցից դուրս էլ կեանք կայ...

Խօսակցութիւնը վերջացաւ։

Ես որոնեցի քաղքցուն, որ հարցնեմ թէ գտա՞ւ արդեօք վերջապէս նա դեկադենտներին թէ ոչ։ Բայց նա արդէն գնացել էր։

Ես խոմ տեսայ։

Վրէժ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

10 յունվարի

ՈՒՐԱԼՍԿ։ Կասպիական ծովը կտրեց սառուցը և ծովը տարաւ 80 ձկնորսներին և կազակներին. նրանց փրկելու համար Պետրովսկից ուղարկված է շոգենաւ։

Վարշավայով անցաւ անգլիական արտակարգ դեսպանութիւնը, որ գնում է պարսից Շահի մօտ։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Ստորագրված է դաշնագիր Պանամեան ջրանցքի մասին։

ԿԻՒՐԱՍԱՕ։ Մարակաիբօից «Ֆալկէ» նաւի հրամանատարի ստացած տեղեկութիւնների համեմատ, գերմանական «Վինէտա» և «Պանտէր» նաւերը այրեցին և աւերեցին «Սանտ-Կարլօս» ամրութիւնը։

ՍՕՖԻԱ։ Ֆինանսների մինիստրութիւնը մշակեց ընդհանուր մաքսային սակագնի նախագիծ այն պետութիւնների համար, որոնց հետ Բօլգարիան առևտրական դաշնագիրներ չունի։

ՄԱՐԱԿԱԻԲՕ։ Այսօր գերմանական նաւերը վերսկսեցին «Սանտ-Կարլօս» ամրութեան ռմբակոծութիւնը։ Ամրութիւնը դեռ ևս կանգուն է։

ՏԱՆԺԷՐ։ Սուլթանի զօրքերը ջարդեցին Խայեանեան ցեղին, որ միացել էր թեկնածուի հետ։ Խայեանների երկրում հանգստութիւնը վերականգնված է։

ԲԵՐԼԻՆ։ Նիստի սկզբում փոխ-նախագահ Շտօլբէրգ կարդաց Բալլէստրէմի յայտարարութիւնը «Kreuz-Zeitung»-ի յօդուածի վերաբերմամբ, որի մէջ քննադատվում է Բալլէստրէմի գործերի կառավարման ընթացքը։ Բալլէստրէմ յայտարարում է, որ ըստ երևոյթին պահպանողականների վստահութիւնը չը վայելելով, կուսակցութիւնը ոչ մի կապ չունի «National Liberal» լրագրի յօդուածի հետ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնա, Մեծ Իշխան Թագաժառանգը և Մեծ Իշխանուհի Մարիա Պավլովնա այցելեցին յունվարի 9-ին ջրանկարի ցուցահանդէսը և ձեռք բերեցին մի քանի ակվարէլներ։

Յունվարի 9-ին գերմանական թագաժառանգ պրինցը նախաճաշեց Նոցա Մեծութիւնների մօտ։ Նրա սվիտան բաղդ ունէր հրաժեշտի ողջոյն տալ Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնային և Մեծ Իշխան Թագաժառանգին։ Երեկոյեան ձմեռային պալատում Բարձրագոյն ներկայութեամբ կայացաւ կինօմատոգրաֆիական ներկայացում։ Ցոյց տրվեցին Նոցա Մեծութիւնների Կրիմում, գերմանական կայսերի մօտ և Ռէվէլում մնալու պատկերները։

11 յունվարի

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Թոքերի բորբոքումից վախճանվեց սևծովեան նաւատորմի գլխաւոր հրամանատար Տիրտով։

ՏԱՆԺԷՐ։ Ֆէցից ժամանեց գլխաւոր հրամանատարը 36 գերիներով և 16 սպանվածների գլուխներով. դրանք խայեանների շրջաններում կատարած գործերի հետևանքներն են։ Դրութիւնը լուրջ է համարվում։

ՄԱՐԱԿԱԻԲՕ։ Սանտ-Կարլօսի ռմբակոծութիւնը վերսկսված է։ Ամրութիւնը շատ վնասված է։

ՎԻԵՆՆԱ։ Չեխական կլուբը վճռեց պարլամենտական բոլոր միջոցներով կռւել կառավարութեան և Կերբէրի դէմ։

ՍՏՕԿՀՕԼՄ։ Բժիշկների խորհրդով թագաւորը հրաժարվեց Նորվեգիա գնալուց և վճռեց առժամանակ կառավարչութիւնը յանձնել թագաժառանգ պրինցին։

ՍՏՕԿՀՕԼՄ։ Թագաւորը հանգստութեան կարիք ունի. նրան խորհուրդ են տալիս առժամանակ գործերով չը պարապել։

ՍՕՖԻԱ։ Ճիշդ չէ այն լուրը, որ իբր թէ մինիստրութիւնը դիտաւորութիւն ունի հրաժարական տալ։

ԼՕՆԴՕՆ։ Լինչ, որը մեղադրվում է պետական դաւաճանութեան մէջ, դատապարտված է մահվան պատժի։—Պետութիւնները չեն քննի վենեցուէլական ծովափից պաշարումն վերացնելու հարցը մինչև որ դիպլօմատիական ներկայացուցիչները չը հաւաքվեն Վաշինգտօնում։—«Morning Post» ասում է, որ Սանտ-Կարլօս ամրութեան վրա յարձակումը արդարացի վարմունք է։ «Standard» նկատում է, որ գերմանական նաւերը իրաւունք ունէին ույժ գործադրել։

ՊԱՐԻԶ։ Զինուորական մինիստրի բացատրութիւնից յետոյ, թէ ինքն միշտ հոգ է տանում, որպէս զի զօրքի մէջ պահպանվի օրէնքին հնազանդվելը և դիսցիպլինա յարգելը, ընդունվեց հերթական գործերին անցնելը, հաւանութիւն տալով կառավարութեան յայտարարութիւններին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզատեղ. հիւանդ.
ԶԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Դ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեք. ուրբաթ։
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՑԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. ՌՈՍՏՈՄԲԷԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. և մորթու հ. (ելեկտրաբուժ.)։
Ն. Ս. ԼԻՒԲԵՑԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբույժ) ներքին և վեներական հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ց. ԱՌՎԱՆԻՑԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Մի չքաւոր երիտասարդ, որ պատրաստվում է սեպտեմբերին մտնել Ներսիսեան դպրոց, կարօտ է ամսական 8 րուբլի օժանդակութեան։ 2—3

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԽԵՂՃԵՐԸ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Գինն է 1 րուբլի
Ծանրոցահարկով 1 ր. 20 կոպէկ։
Դիմել հեղինակին. Тифлисъ, редакція „Мурчъ" եւ Գուտտենբէրգ գրավաճառանոցը։

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՕՐ. Ս. ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆ

Շարունակում է հիւանդների ընդունելութիւնը։
Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7
(Կ. Կ.) 33—105

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Չորեքշաբթի, յունվարի 15-ին, նշանակված է ընդհանուր ժողով, որի ժամանակ պէտք է ընտրվեն ժողովարանի աւագներ, վերստուգող յանձնաժողովի անդամներ, նոյնպէս և պէտք է քննվեն անցեալ 1902 թւականի հաշիւները և ներկայ 1903 թւականի նախահաշիւները։ Վերջում տեղի կունենայ ընդհանուր ընթրիք անդամների համար, 1 ր. 20 կոպէկ վճարով։ 3—4

ՋԳԱՑՄՈՒՆՔ

Զուտ բանաստեղծական - գեղարուեստական հանդէսը լոյս կը տեսնի արտասահմանում տարեկան երկու գիրք։
Բաժանորդագինն է 3 ր. կանխիկ

Առաջին գիրքը նոր լոյս տեսաւ Վենետիկի Մխիթարեան տպարանում և շուտով կուղարկվի բաժանորդներին։ Գլխաւոր պահեստը տեղին միայն ինձ մօտ։ Դիմելու են իմ հասցէին՝ Շուլաւէր։

Խմբագիր-հրատարակիչ՝
2—3 Գրիգոր Բալասեան

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, յունվարի 12-ին
հայ թատերասէրների խումբը
Ի ՆՊԱՍՏ ՌԷԺԻՍՕՐ Պ. ԱՐԱՔՍԵԱՆԻ
Բարեհաճ մասնակցութեամբ Օ. Աբէլեանի և Ա. Մամիկոնեանի
կը ներկայացնէ

ՆՆՋԱՐԱՆ—ՎԱԳՕՆՆԵՐԻ ԿՕՆՏՐՕԼԵՕՐ

Կօմեդ. ֆարս 3 արար. հեղ. Բիսսօնի, թարգ. Արաքսեանի

Մասնակցում են. տ. տ. Արաքսեան, Մամուլեան, օր. օր. Զալալեան, Օհանեան, Զմշկեան 2-դ, պ. պ. Աբէլեան, Արաքսեան, Ագեան, Աղելխանեան, Գնունի, Մամիկոնեան, Ղուշեան, Զապեան

Սկիզբն է 8 ժամին
Ռէժիսօր Արաքսեան
ՎԵՐՋԸ ՊԱՐԵՐ
Տոմսակները վաճառվում են ժողովարանի չվէյցարի մօտ։ 2—2

ՑԵՐԵԿՎԱՅ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ

ԷԺԱՆԱՑՐԱԾ ԳՆԵՐՈՎ
ԱՐՏԻՍՏԻՔԱԿԱՆ ԸՆԿ. ԹԱՏՐՈՆ
Կիրակի, յունվարի 12-ին
(Ցերեկով)
Հայոց դրամատիկական ընկերութեան խումբը
կը ներկայացնէ

ՊԷՊՕ

Կոմէդիա 3 գործ. հեղ. Գ. Սունդուկեանցի։
Պէպօի դերը առաջին անգամ կը կատարէ պ. ԱԲԵԼԵԱՆ։
Սկիզբն է 12½ ժամին
Տոմսակները ծախվում են կասսայում։ 2—2

ՑԵՐԵԿՎԱՅ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ
Երկուշաբթի, յունվարի 13-ին
Հայոց դրամատիկական ընկերութեան խումբը մասնակցութեամբ
Տ. ՍԻՐԱՆՈՅՇԻ
և բարեհաճ մասնակցութեամբ օր. և պ. Զմշկեանների
կը ներկայացնէ

I

ԿԵԱՆՔԻ ԱՐԺԷՔԸ

Դրամա 4 գործ. Վ. Նեմիրօվիչ-Դանչենկօյի թարգմ. Ալ. Մուրադբէգեանի

II

ՄԿՆԻԿ

Վօդ. 1 գործ.
Մասնակցում է ամբողջ խումբը։
Սկիզբն է 8 ժամին
Տոմսակները կարելի է ստանալ կասսայում։
Ազդ։ Երկուշաբթի, յունվարի 20-ին, ի նպաստ տ. Մէլիքեանի և պ. Յարութիւնեանի կը ներկայացնեն «Զօրախաղ» և «Ապահարզան»։ 2—2

ԿԱՊՍՈՒԼՆԵՐ ՄԱՏԻԿՕԻ

(Cansules au Matico)

ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԻ

Թոյլ է տրված Ռուսաստանում։



Աչքողութեամբ գործ է ածվում հոնորէի բժշկութեան ժամանակ, երբէք չը յոգնեցնելով ստամոքսը, ինչպէս այդ լինում է, երբ գործ է ածվում Կապայբալզամը հեղուկ ձևով։

Парижъ, 8, Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։
(12 և 28) 1—24

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ա. Մ. Խան-Աղեան

Ընդունում է հիւանդներին 9—2 եւ 4—6 ժ. Երեւանեան հրապարակ, տուն Խարազեանի № 3։ (Կ. Ե. Կ.) 28—100

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, յունվարի 19-ին, Ցխինվալում հրդեհից վնասվածների օգտին տեղի կունենայ

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՐ

Նուագահանդէսով, մասնակցութեամբ տ. տ. Գօնդատիի, Ոսկանեանի, Ռավիցկայայի, Ֆօն-Վանդէրի, պ. պ. Արաքսեանի, իշխ. Բարաթօվի, Մեախիի, Նիկիֆօրակի, Սեմիգալօվի, Շմիդհօֆի Պ*. և երգեցիկ խմբի, պ. Մամաջանի ղեկավարութեամբ։ Նուագահանդէսից յետոյ

ՊԱՐԵՐ ԿՕՏԻԼԻՕՆՈՎ

Պարերի ժամանակ տիկինները կարող են դիմակներ դնել։ Բազարի սկիզբն է երեկոյեան ժամը 5-ին, իսկ նուագահանդէսը ժամը 9-ին։ Տոմսակները 3 ր. 50 կոպէկից մինչև 1 ր. 10 կ. և 55 կ. միայն բազարի մուտքի համար, կարելի է վաղօրօք առնել իշխ. Մ. Թումանեանի մօտ (Барятинская 8), կոմս Պասկեվիչի խանութում (Голов. пр. зд. Артист. Общ.) և ժողովարանի չվէյցարի մօտ։ Նուագահանդէսի համար վերցրած տոմսակները իրաւունք են տալիս լինել նաև բազարում։ (12, 15, 19) 1—3

Ֆրանսիական Ծովագնացային Ընկերութիւն

«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ»—«MESSAGERIES MARITIMES».

20-ին յունվարի (2-ին փետրվարի ըստ ն. տ.) մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 5-ին, «Guadiana» շոգենաւը, հանդիպելով Տրապիզօն, Սամսօն, Կ. Պօլիս, Դարդանել, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, նոյնպէս և մինչև Շանհայ (Չինաստանում), Վլադիվօստօկ գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել Ընկերութեան Թիֆլիսի գործակալ՝ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալէրէյում, № 127 գրասենեակը, հեռախօս № 608։ Գրասենեակը բաց է՝ ժամը 9—1-ը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից։ 1—1

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ

ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ

Գ. ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆԻ

ԴՕԿՏՕՐ ՔԻՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Քիմիական անալիզներ (որակական եւ քանակական) ամեն տեսակ նիւթերի՝ հանքեր, հանքային ջրեր, գիւղատնտեսական նիւթեր եւ այլն եւ այլն։
Տեխնիկական փորձեր եւ խորհուրդներ։

Դիմել՝ Тифлисъ, Кавказская Центральная Лабораторія Доктору химіи Г. Пастермаджіянъ, Вельяминовская ул., д. Лорисъ-Меликова, № 19. 16—24

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՆԱԴԷԺԴԱ"

Ծովային, գետային եւ ցամաքային ապահովագրութեան, ապրանքների տեղափոխութեան եւ գոյքերը կրակից ապահովագրելու համար։

ՀԻՄՆՎԱԾ Է 1847 ԹՒԻՆ

Հիմնական դրամագլուխը . . . . . . 1,650,000 րուբլի
Պահեստի դրամագլուխը . . . . . . 2,664,808 »

I. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

Աւելի քան 300 գործակալութիւններ եւրոպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի եւ հեռաւոր Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս եւ ներկայացուցիչներ արտասահմանի գլխաւոր քաղաքներում։

Տեղափոխութիւն ամեն տեսակ բեռների եւ իրերի, որոնց ընդունելութիւնը եւ յանձնումը կատարվում է թէ տանը եւ թէ պահեստներում ու խանութներում։

Յանձնումն բեռների ուղարկողների կողմից առաջարկված պայմաններով (վերադիր վճար ի հաշիւ ուղարկողների, դրամի փոխադրութիւն (переводъ) բեռները յանձնելու տեղը հասցնելու համար եւ այլն)։

Պահպանութիւն բեռների արտօնեալ պայմաններով ստացման տեղերում՝ ապահովագրելով նրանց պահեստներում, որի համար շատ կէտերում կան ընդարձակ պահեստներ, յատկապէս բեռներ պահելու համար։

II. ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Սեփական մարդատար, ապրանքատար եւ ձգող շոգենաւեր, ծովային եւ գետային նաւեր (70 նաւ)։

Բեռնակիր եւ մարդատար նաւերի պարբերական հաղորդակցութիւն Վոլգա գետի բոլոր նաւահանգիստների մէջ, Ռիբինսկից մինչեւ Աստրախան, եւ Կասպից ծովի բոլոր նաւահանգիստների մէջ, Աստրախանից մինչեւ Պարսկաստանի ափերը։

Ամենաընդարձակ պահեստներ Նիժնիում (սիբիրական նաւամատոյցի վրա), Աստրախանում, Բագւում եւ Կրասնովօդսկում։

Բեռները անընդհատաբար ուղարկելու համար ընկերութեան շոգենաւագնացութիւնը համաձայնութիւն է կապել երկաթուղիների հետ։ Այն ապրանքների տեղափոխութեան համար, որոնք ուղարկվում են Ռուսաստանից Պարսկաստան եւ Պարսկաստանից Ռուսաստան, գոյութիւն ունի առանձին, բացառիկ արտօնութիւններով, համաձայնութիւն Պարսկական ապահովագրական եւ տեղափոխութեան ընկերութեան հետ։

III. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ։

ա) Ապահովագրութիւն բեռների, որոնք տեղափոխվում են թէ ցամաքային և թէ ջրային ճանապարհներով (ծովերով և գետերով)։
բ) Ապահովագրութիւն կրակից ամեն տեսակ գոյքերի։
գ) Ապահովագրութիւն ամեն տեսակ դժբաղդ դէպքերից ճանապարհին ամեն տեսակ նաւերի, շոգենաւերի, առագաստանաւերի, վագօնների և վագօն-ցիստերնների։
դ) Ապահովագրութիւն թանգագին իրերի և արժէքաւոր թղթերի, որոնք ուղարկվում են պօստով, ցամաքային և ծովային ճանապարհներով, համաշխարհային պօստային դաշնակցութեան բոլոր կէտերի մէջ։

Ապահովագրութիւններ ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բոլոր գործակալութիւնների մէջ։

Բացի տեղափոխութեամբ պարապող գործակալութիւններից, կրակից ապահովագրելու գործերով մասնաւորապէս զբաղվում են էլի ուրիշ 350 գործակալութիւններ։

Ս. Պետերբուրգի «Նադեժդա» ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Ադմիրալտէյսկի պրօսպէկտի վրա, № 10-րորդ տանը։

Լիազօրներ—ծովային շոգենաւագնացութեան համար՝ Բագւում, գետային շոգենաւագնացութեան համար՝ Նիժնի-Նովգորոդում։

Թիֆլիսի գործակալութիւնը—Դվօրցօվայա փողոցի վրա, վրաց ազնուականների տանը։ Տելեֆօն № 108
(Ե. Ա. Կ.) 31—120

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ"

ԿՕՆՖԷՏԻ ԵՒ ՇՕԿՕԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած ապրանքները արժանացան—
Կովկասում կոնֆէտի արդիւնաբերութեան

ՄԻԱԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՅ ՄԵԴԱԼԻ

Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱԹ-ԼՕԽՈՒՄ, կարամէլ «ԻԲԻԼԷՅՆԱՅԱ» եւ առհասարակ բարձր յատկութեան կարամէլներ մրգեղէնով։
Գործարանում աշխատում են մասնագէտ նշանաւոր վարպետներ։
Պատուէրներով դիմել. Թիֆլիս, Պավլօվսկայա փողոց, սեփական տուն
Գործարանի հեռախօս № 362, գործարանական խանութիւնը № 772։
92—100

Дозволено Цензурою, Тифлисъ, 11 Января 1903 г.
Электропечатная Груз. Издат. Т—ва, В.-Ванкская ул.